ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

«ԳՈՒԳԱՐՔԻ «ԵՐԱԶԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի
ՏՆՕՐԵՆ ՎԱՐԴԱՆՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՑ

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

Սույնով տեղեկացնում եմ, որ «ԳՈՒԳԱՐՔԻ «ԵՐԱԶԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ի կարիքների համար հայտարարված «ԳՈՒԳԵՐԱԶԻԿ-ԳՀԱՊՁԲ-24/01» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել «Գրիգորյանս Ս» ՍՊԸ-ն:

Գնման ընթացակարգի հայտերի գնահատման փուլում ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Արտակշին» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 08425027) հիմնադիրն ու տնօրենը հանդիսանում են «Գրիգորյանս Ս» ՍՊԸ-ի հիմնադիրը և տնօրենը (իրավաբանական անձանց պետական ռեգիստրից քաղվածքները կցվում են):

Ուստի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 121-րդ կետով՝ «ԳՈՒԳԵՐԱԶԻԿ-ԳՀԱՊՁԲ-24/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել չդիտարկել «Գրիգորյանս Ս» ՍՊԸ-ի հայտը, քանի որ «Արտակշին» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելու փաստը ինքնաբերաբար հանգեցնում է «Գրիգորյանս Ս» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը և առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով՝ խնդրում եմ «Գրիգորյանս Ս» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարգանքով՝ Վարդանուշ Հարությունյան

IMPULSE

ՀՀ, ք. Վանաձոր

30.01.2024թ.

ՈՐՈՇՈՒՄ
«ԳՈՒԳԱՐՔԻ «ԵՐԱԶԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի
ՏՆՕՐԵՆ ՎԱՐԴԱՆՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հետևյալ փաստը.

- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 121-րդ կետով «Գրիգորյանս Ս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի դիտարկվել, քանի որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Արտակշին» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 08425027) հիմնադիրն ու տնօրենը հանդիսանում են «Գրիգորյանս Ս» ՍՊԸ-ի հիմնադիրը և տնօրենը, ուստի «Արտակշին» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելը ինքնաբերաբար հանգեցնում է «Գրիգորյանս Ս» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակմանը:

ԵՎ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով, ինչպես նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «Գրիգորյանս Ս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար հիմքերը գնահատել բավարար:
2. «Գրիգորյանս Ս» ՍՊԸ-ին տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Հարգանքով՝ Վարդանուշ Հարությունյան